

ՀԱԳՄՉ 07.11

Առաջին հրատարակություն
23 դեկտեմբերի 2003թ.
Ներառում է փոփոխություններ 1, 2 և 3-ը

Ականների վտանգի մասին իրազեկման կառավարման նախագիծ

Տնօրեն,
ՄԱԿ-ի Ականազերծման ծառայություն (ՄԱԿԱԾ),
2 United Nations Plaza, DC2-0650
New York, NY 10017
USA

Էլ. Փոստ՝ mineaction@un.org
Հեռախոս՝ (1 212) 963 1875
Ֆաքս՝ (1 212) 963 2498
Կայքէջ՝ www.mineactionstandards.org

Նախազգուշացում

Սույն փաստաթուղթն ուժի մեջ է մտել կազմի վրա նշված ամսաթվից: Քանի որ Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչները (ՀԱԳՄՉ) պարբերաբար վերանայվում և թարմացվում են, դրանից օգտվողները պետք է այցելեն ՀԱԳՄՉ ծրագրի կայքէջը վերջինիս կարգավիճակը ստուգելու նպատակով (<http://www.mineactionstandards.org/>) կամ ՄԱԿԱԾ կայքէջ հետևյալ հասցեով՝ <http://www.mineaction.org>:

Հեղինակային իրավունք

ՄԱԿ-ի սույն փաստաթուղթը Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչ է (ՀԱԳՄՉ) և սեփականության իրավունքով պաշտպանված է ՄԱԿ-ի կողմից: Ոչ սույն փաստաթուղթը, ոչ էլ դրա որևէ հատված չի կարելի վերարտադրել, պահել կամ որևէ այլ միջոցով, կամ ձևով փոխանցել որևէ այլ նպատակի համար՝ առանց ՄԱԿ-ի անունից գործող ՄԱԿԱԾ-ի կողմից նախապես գրավոր համաձայնություն ձեռք բերելու:

Սույն փաստաթուղթը ենթակա չէ վաճառքի:

Տնօրեն

ՄԱԿ-ի Ականազերծման ծառայություն (ՄԱԿԱԾ)

2 United Nations Plaza, DC2-0650

Նյու Յորք, NY 10017

ԱՄՆ

Էլ-փոստ՝ mineaction@un.org

Հեռախոս՝ (1 212) 963 1875

Ֆաքս՝ (1 212) 963 2498

Բովանդակություն

Բովանդակություն	iii
Նախաբան	v
Ներածություն	vi
Ականաների վտանգի իրազեկման (ԱՎԻ) կառավարման ուղեցույց.....	1
1. Ծավալ.....	1
2. Փաստաթղթեր	1
3. Տերմիններ, սահմանումներ և հապավումներ	1
4. Ականաների վտանգի իրազեկում (ԱՎԻ)	3
4.1. Հանրային տեղեկությունների տարածում.....	4
4.2. Ուսուցում և վերապատրաստում	4
4.3. Ականազերծման գործողությունների մասով համայնքային կապ	5
5. Ականազերծման գործողությունների ծրագրի պլանավորում	6
5.1. Ականազերծման գործողությունների ընդհանուր գնահատման (ԱԳԸԳ) գործընթաց	6
5.2. Ականազերծման գործողությունների տվյալների շարունակական հավաքագրում և գնահատում	7
5.3. Նախագծի իրագործում	7
6. ԱՎԻ նախագծի փուլային կառուցվածք	7
6.1. Տվյալների հավաքագրում և կարիքների գնահատում	9
6.2. Պլանավորում	10
6.3. Իրագործում	10
6.4. Մոնիտորինգ.....	11
6.5. Գնահատում	11
7. ԱՎԻ կազմակերպությունների և գործողությունների հավատարմագրում	12
8. Ուղղորդող սկզբունքներ	12
8.1. ՀԱԳՄՉ-երի ուղղորդող սկզբունքներ.....	12
8.2. Ուղղորդող սկզբունքներ ԱՎԻ-ի գծով.....	12
8.2.1. Շահագրգիռ կողմերի ներգրավում	13
8.2.2. Համակարգում.....	13
8.2.3. Ինտեգրում	13
8.2.4. Համայնքային մասնակցություն և լիազորություններ.....	13
8.2.5. Տեղեկությունների կառավարում.....	13
8.2.6. Համապատասխան ընտրություն.....	14
8.2.7. Կրթում/Իրազեկում	14
8.2.8. Վերապատրաստում	14
9. Պարտավորություններ	14
9.1. Միավորված ազգերի կազմակերպություն	14
9.2. Տարածաշրջանային կազմակերպություններ	15
9.3. Ականազերծման գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ)	15
9.4. Դոնորներ.....	15
9.5. Ականազերծման գործողությունների կազմակերպություններ	15
Հավելված Ա (Նորմատիվ) Փաստաթղթեր.....	16

Հավելված Բ (Տեղեկատվական) Տերմիններ, սահմանումներ և հապավումներ	17
Հավելված Գ (Տեղեկատվական) ԱՎԻ շրջափուլ	22
Փոփոխությունների գրանցում	23

Նախաբան

Մարդասիրական հակաականային ծրագրերի միջազգային չափորոշիչները առաջին անգամ առաջարկվել են 1996թ. հուլիսին Դանիայում տեղի ունեցած միջազգային տեխնիկական գիտաժողովի աշխատանքային խմբերի կողմից: Չափորոշիչներ են սահմանվել ականազերծման բոլոր ասպեկտների համար, չափանիշեր են առաջարկվել և համաշխարհային նոր սահմանում է տրվել «ականազերծում» գաղափարին: 1996թ վերջում Դանիայում առաջարկված սկզբունքները զարգացվել են ՄԱԿ-ի կողմից անցկացվող ժողովի աշխատանքային խմբի կողմից և մշակվել են Մարդասիրական ականազերծման գործողությունների միջազգային չափանիշերը: Առաջին հրատարակությունը տպագրվել է ՄԱԿ-ի ականազերծման ծառայության (ՄԱԿԱԾ) կողմից 1997թ. մարտին:

Այս նախնական չափորոշիչների ծավալները այդ ժամանակից ի վեր ընդլայնվել են՝ ներառելու հակաականային գործողությունների այլ բաղադրիչներ և արտացոլելու գործողությունների, գործընթացների, գործելատճերի և նորմերի հետ կապված փոփոխությունները: Չափորոշիչները վերամշակվեցին և վերանվանվեցին որպես Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչներ (ՀԱԳՄՉ), որի առաջին հրատարակությունը լույս տեսավ 2001թ. հոկտեմբերին:

ՄԱԿ-ն ընդհանուր պարտավորություններ ունի ականային ծրագրերի արդյունավետ կառավարումը խրախուսելու և կյանքի կոչելու համար, որը ներառում է չափորոշիչների մշակումն ու պահպանումը: Այդ պատճառով ՄԱԿԱԾ-ը ՄԱԿ-ում տեղակայված այն գրասենյակն է, որը պատասխանատու է ՀԱԳՄՉ-ի մշակման և պահպանման համար: ՀԱԳՄՉ ստեղծվում է Ժնևի Մարդասիրական ականազերծման միջազգային կենտրոնի աջակցությամբ:

ՀԱԳՄՉ-ն պատրաստելու, վերանայելու և վերափոխելու աշխատանքը իրականացվում է տեխնիկական հանձնաժողովների կողմից միջազգային, կառավարական և հասարակական կազմակերպությունների օժանդակությամբ: Յուրաքանչյուր չափորոշիչի ամենավերջին տարբերակը, տեխնիկական հանձնաժողովների կատարած աշխատանքի հետ միասին կարելի է գտնել <http://www.mineactionstandards.org/> կայքում: Առանձին ՀԱԳՄՉ-ները վերանայվում են առնվազն յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ՝ արտացոլելու հակաականային գործողության զարգացող նորմերն ու պրակտիկան և միջազգային կանոնակարգերի և պահանջների շարքում ներառելու կատարվող փոփոխությունները:

Ներածություն

Ականների վտանգի իրազեկման (ԱՎԻ) միջազգային չափորոշիչների մշակումը

1998թ-ին ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի (UNICEF) կողմից մշակվել են *Ականների և չպայթած զինամթերքի մասին իրազեկման և ուսուցման միջազգային ուղենիշները*՝ նպատակ ունենալով միջազգայնորեն համաձայնեցված մոտեցում ապահովել ԱՎԻ (նախկինում հայտնի որպես “ականների մասին իրազեկման”) ծրագրերի պլանավորման, իրագործման, մոնիտորինգի և գնահատման համար: Այդ ժամանակ պատկերացում է ձևավորվել, որ հետագայում այդ “Ուղենիշները” կվերանայվեն՝ արտացոլելու ականազերծման գործողությունների զարգացող փորձառնություններն ու նորմերը:

ԱՎԻ-ն ականազերծման գործողությունների հինգ բաղադրիչներից մեկն է: Մյուսներն են՝ ականազերծում, աջակցություն տուժածներին, քարոզչություն՝ ականների օգտագործման վատ հետևանքները բնորոշելու ուղղությամբ և աջակցություն՝ հակահետևակային ականների լիակատար արգելման ուղղությամբ ու կուտակված ականների վնասազերծում: Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչների (ՀԱԳՄՉ) առաջին երկու հրատարակությունները չեն ներառել առանձին ԱՎԻ-ին առնչվող չափորոշիչներ և ուղեցույցներ: Այս և ԱՎԻ շարքում զետեղված մյուս ուղենիշներն անդրադառնում են ԱՎԻ-ի գծով առանձնահատուկ կարիքներին՝ որպես ականազերծման գործողությունների մաս:

Ինչպես և բոլոր ՀԱԳՄՉ-ների, այնպես էլ ԱՎԻ չափորոշիչների և ուղեցույցների նպատակն է բարելավել ականազերծման գործողությունների *անվտանգությունն ու արտադրողականությունը*: Քանի որ ԱՎԻ չափորոշիչները և ուղեցույցները հզորացված կապ են պահանջում ականազերծման գործողությունների օպերատորների և ականներից տուժած հանայնքների միջև, ապա դրանք նպաստում են նաև ականազերծման գործողությունների օպերատորների *արդյունավետության* բարձրացմանը:

ԱՎԻ կառավարման վերաբերյալ սույն Ուղեցույցը և ԱՎԻ-ի վերաբերյալ այլ ՀԱԳՄՉ-ները մշակվել են 1998թ-ին UNICEF-ի կողմից մշակված վերոհիշյալ Ուղենիշների հիման վրա և փոխարինում են դրանց: ՀԱԳՄՉ-ներում ԱՎԻ-ին վերաբերող շարքը հովանավորվել և մշակվել է UNICEF-ի կողմից՝ ամրագրելու այդ կազմակերպության դերը որպես ՄԱԿ-ի կազմում ԱՎԻ-ի գծով պատասխանատու օղակ: Ներդրում է կատարվել Ականազերծման գործողությունների ազգային մարմինների (ԱԳԱՄ-ներից), UNICEF-ի տարածքային գրասենյակների և այլ կազմակերպությունների ու անհատների կողմից, ովքեր ներգրավված են ականազերծման գործողությունների իրագործման մեջ:

Սույն Ուղեցույցի և հարակից այլ ՀԱԳՄՉ փաստաթղթերում *“ականների մասին իրազեկում”* տերմինը փոխարինվել է “ականների վտանգի մասին ուսուցում” տերմինով: ԱՎԻ տերմինի իմաստի ու ծավալի բացատրությունը տրվում է սույն Ուղեցույցում:

ՀԱԳՄՉ-ների կիրառումը ԱՎԻ-ում

ՀԱԳՄՉ-երի կազմում գետեղված ԱՎԻ շարքը մշակվել է՝ բարելավելու ականագերծման գործողությունների ծրագրերի որակը և ապահովելու, որ ԱՎԻ կարողանա արդյունավետորեն բավարարել ականներից տուժած համայնքների կարիքներն ու գերակայությունները: Նրանք աջակցում են ԱԳԱՄ-ին մշակելու ազգային չափորոշիչներ և ազգային (ԳՄԸ-ներ)՝ ստեղծելով ԱՎԻ հիմունքների շրջանակը, որոնք կարող են օգտագործվել կամ հարմարեցվել օգտագործման համար՝ որպես ազգային չափորոշիչ: Դրանք նպաստում են նաև ականագերծման գործողությունների կազմակերպությունների ԳՄԸ-ների¹ մշակմանը:

ԱՎԻ չափորոշիչները և ուղեցույցերը մի ընդհանուր լեզու են ապահովում և տվյալների մշակման ձևեր ու կանոններ են առաջարկում, որոնք հնարավոր են դարձնում տեղեկությունների ճշգրիտ և ժամանակին փոխանակումը: Նրանք նաև հորդորում են ԱԳԱՄ-ին գործիքներ և կարողություններ մշակել՝ ականագերծման գործողությունների ազգային միավորված ծրագրի շրջանակներում պլանավորելու, իրականացնելու, մոնիտորինգի ենթարկելու և գնահատելու ԱՎԻ-ն:

ՀԱԳՄՉ կազմում գետեղված ԱՎԻ շարքը չի սահմանում այն ձևը, թե ինչպես են դաշտային պայմաններում բավարարվելու ԱՎԻ պահանջները. դա մեկնաբանվում է ազգային և տեղական ԳՄԸ-ներում, հրահանգներում և կանոնադրություններում: ԱՎԻ-ի գծով ազգային և տեղական ԳՄԸ-ների մշակման վերաբերյալ ուղեցույցը, ինչպես նաև ԱՎԻ գործիքների և մեթոդների հավաքածուն բերված են *ԱՎԻ ծրագրերի իրականացման ուղենիշեր* շարքում²:

1. Ականագերծման գործողությունների կազմակերպությունները պետք է ապահովեն, որ նրանց ԳՄԸ-ները համահունչ լինեն ազգային չափորոշիչների և օրենսդրության հետ: Հաջող հավատարմագրումը սովորաբար պահանջում է կազմակերպությունների ԳՄԸ-ների “տեղայնացում”:

2. UNICEF-ի կողմից մշակման ընթացքում է:

Ականների վտանգի իրազեկման (ԱՎԻ) կառավարման ուղեցույց

1. Ծավալ

Սույն Ուղեցույցը սկզբունքներ է սահմանում և ուղեղություն է ապահովում ԱՎԻ արդյունավետ կառավարման վերաբերյալ: Դրա նպատակն է պարզաբանել ԱՎԻ-ի դերը և ԱՎԻ-ին առնչվող ՀԱԳՄՉ-երի շարքի մասին ընդհանուր պատկեր ապահովել: Տվյալ շարքում կան յոթ ՀԱԳՄՉ-ներ, ներառյալ սույն Ուղեցույցը: Դրանք են՝

- ՀԱԳՄՉ 07.11 ԱՎԻ կառավարման ուղեցույց;
- ՀԱԳՄՉ 07.31 ԱՎԻ կազմակերպությունների և գործողությունների հավատարմագրում;
- ՀԱԳՄՉ 07.41 ԱՎԻ ծրագրերի և նախագծերի մոնիտորինգ;
- ՀԱԳՄՉ 08.50 Տվյալների հավաքագրում և կարիքների գնահատում՝ ԱՎԻ նպատակով;
- ՀԱԳՄՉ 12.10 Ականների ռիսկի վերաբերյալ կրթման ծրագրերի և նախագծերի պլանավորում;
- ՀԱԳՄՉ 12.20 Ականների ռիսկի վերաբերյալ կրթման ծրագրերի իրականացում
- ՀԱԳՄՉ 14.20 ԱՎԻ ծրագրերի և նախագծերի գնահատում:

Սույն Ուղեցույցը պետք է կարդալ նախքան ԱՎԻ-ի վերաբերյալ մյուս վեց չափորոշիչներն ու ուղեցույցերը կարդալը:

Սույն Ուղեցույցը պետք է կարդալ այլ ՀԱԳՄՉ չափորոշիչների և ուղեցույցերի հետ համատեղ: Մասնավորապես, ուշադրություն պետք է դարձնել ՀԱԳՄՉ 01.10-ին, որը սահմանում է ՀԱԳՄՉ-երի դերն ու դրանց ճիշտ և համապատասխան օգտագործման համար ուղղորդող սկզբունքների հիմքն է դնում:

2. Փաստաթղթեր

Նորմատիվ փաստաթղթերի ցանկը բերված է Հավելված Ա-ում: Նորմատիվ փաստաթղթերը կարևոր Հավելված Ա-ում բերված է նորմատիվային հղումների ցանկը: Նորմատիվային հղումները կարևոր փաստաթղթեր են, որոնց հղում է կատարվում սույն չափորոշիչում և որոնք կազմում են սույն Ուղեցույցի դրույթների մի մասը:

3. Տերմիններ, սահմանումներ և հապավումներ

Հավելված Բ-ում բերված է սույն ուղեցույցում կիրառված տերմինների, սահմանումների և հապավումների ցանկը: ՀԱԳՄՉ-ում կիրառված բոլոր տերմինների, սահմանումների և հապավումների ցանկը բերված է ՀԱԳՄՉ 04.10-ում:

ՀԱԳՄՉ-ի չափորոշիչների շարքում «պետք է», «հարկավոր է» և «կարող է» բառերն օգտագործված են համապատասխանության նախատեսված մակարդակը ցույց տալու նպատակով: Այդ կիրառումը համապատասխանում է ISO չափորոշիչների և ուղեցույցների լեզվի հետ:

- ա) «պետք է» կիրառվում է ցույց տալու համար այն պահանջները, մեթոդները կամ առանձնահատկությունները, որոնք պետք է ընդունվեն՝ չափորոշիչին ամբողջությամբ բավարարելու համար.
- բ) «հարկավոր է» օգտագործվում է նախընտրելի պահանջները, մեթոդները կամ առանձնահատկությունները ցույց տալու համար.
- գ) «կարող է» օգտագործվում է գործողության հնարավոր մեթոդը կամ ընթացքը ցույց տալու համար:

“Իրազեկում” տերմինը վերաբերում է ժամանակի ընթացքում գիտելիքների, մոտեցումների և գործելաձևերի փոխանցմանն ու ստացմանը՝ ուսուցանման և սովորելու միջոցով:

“Ռիսկ” տերմինը վերաբերում է մարդկանց, գույքին կամ շրջակա միջավայրին պատճառվող ֆիզիկական վնասի տեղի ունենալու հավանականության և դրա ուժգնության համադրությանը: [ISO ուղեցույց 51:1999(E)]

“Ականների վտանգ” տերմինը վերաբերում է ականի կամ պատերազմի պայթուցիկ մնացորդների (ՊՊՄ) ոչ միտումնավոր գործադրման արդյունքում մարդկանց, գույքին կամ շրջակա միջավայրին պատճառվող ֆիզիկական վնասի տեղի ունենալու հավանականությանը և ուժգնությանը:

“Ականների վտանգի կրճատում” տերմինը վերաբերում է այն գործողություններին, որոնք նվազեցնում են մարդկանց, գույքին կամ շրջակա միջավայրին պատճառվող ֆիզիկական վնասի հավանականությունը և/կամ ուժգնությունը: [Վերցվել է ISO ուղեցույց 51:1999(E)-ից]: Ականների վտանգը կարող է նվազեցվել ֆիզիկական միջոցառումների արդյունքում, ինչպես օրինակ ականազերծումը, ցանկապատումը կամ նշագրումը կամ էլ ԱՎԻ միջոցով վարքագծային փոփոխության արդյունքում:

“ԱՎԻ կազմակերպություն” տերմինը վերաբերում է ցանկացած կազմակերպությանը, այդ թվում նաև պետական, ոչ պետական, քաղաքացիական հասարակության կազմակերպությանը, (օրինակ՝ կանանց միություն, երիտասարդական միություն, կարմիր խաչի և մահիկի միություններ), առևտրային հաստատություններ և զինվորականներ (ներառյալ խաղաղապահ ուժերը), որոնք պատասխանատու են ԱՎԻ նախագծերի և առաջադրանքների իրականացման համար: ԱՎԻ կազմակերպությունը կարող է հիմնական կապալառու, ենթակապալառու, խորհրդատու կամ գործակալ լինել: “ԱՎԻ ենթամիավոր” տերմինը վերաբերում է կազմակերպության այն ստորաբաժանմանը, անկախ անվանումից, որը հավատարմագրված է կատարելու նախատեսված մեկ կամ մի քանի ԱՎԻ գործողություններ, ինչպիսիքն են հանրային իրազեկման նախագիծ, դպրոցական կրթական նախագծեր կամ ականազերծման գործողություններում համայնքի հետ կապի ապահովման նախագծի գնահատում:

“Ականազերծման գործողությունների ազգային մարմին կամ մարմիններ” (ԱԳԱՄ) տերմինը վերաբերում է ականապատ տարածքներ ունեցող բոլոր այն երկրների պետական գերատեսչություններին, կազմակերպություններին կամ հաստատություններին, որոնց պարտավոր են կարգավորել, կառավարել և համակարգել ականազերծման գործողությունները: Հիմնականում Ականազերծման գործողությունների ազգային կենտրոնը (ԱԳԱԿ) կամ դրան համարժեք հաստատությունը հանդես է գալիս որպես ԱԳԱՄ կամ գործում է նրա անունից հակաականային բոլոր գործողությունների պարագայում: Առանձին իրավիճակներում և պահերին ՄԱԿ այլ ճանաչված միջազգային կառույցը կարող է հարմար կամ անհրաժեշտ գտնել ստանձնելու ԱԳԱՄ-ի բոլոր պատասխանատվությունները կամ դրանց մի մասը և իրականացնել բոլոր գործառնությունները կամ դրանց մի մասը: Նման դեպքերում ՄԱԿ-ը պետք է համապատասխան տեխնիկական աջակցություն ցուցաբերի, ներառյալ համապատասխան որոկավորում ունեցող անձնակազմ, որը փորձառու է ԱՎԻ գործողություններում:

“Նախագիծ” տերմինը վերաբերում է համաձայնեցված նպատակ ունեցող մի գործողությանը կամ փոխկապակցված գործողությունների շարքին: Նախագիծը սովորաբար ստույգ տևողություն և աշխատանքային ծրագիր է ունենում: Այդ նպատակին հաջողությամբ հասնելու համար անհրաժեշտ միջոցները սովորաբար սահմանվում և համաձայնեցվում են նախքան նախագծի մեկնարկը³:

“Օրագիր” տերմինը ենթադրում է կազմակերպության միջնաժամկետից երկարաժամկետ գործողությունները, որոնք տեղի են ունենում այդ կազմակերպության տեսլականի և ռազմավարական նպատակների իրագործման համար: Ականազերծման գործողությունների

³ Ականազերծման գործողությունների մեջ նպատակ սահմանելու մեթոդը, ինչպես նաև այդ նպատակին հասնելու միջոցները և անհրաժեշտ ռեսուրսները սովորաբար կոչվում են “նախագծի առաջարկ” կամ “նախագծի փաստաթուղթ”:


ծրագիրը բաղկացած է ականազերծման գործողությունների կապակցված նախագծերի շարքից: ԱՎԻ ծրագիրը նմանապես բաղկացած է ԱՎԻ կապակցված նախագծերի շարքից:

4. Ականների վտանգի իրազեկում (ԱՎԻ)

“ԱՎԻ” տերմինը վերաբերում է այն գործողություններին, որոնք նպատակ ունեն նվազեցնել ականների և ՊՊՄ-ների պայթեցման արդյունքում վնասվածքի վտանգը՝ մարդկանց իրազեկվածության աստիճանը բարձրացնելու և վարքագծային փոփոխություններ քարոզելու միջոցով, այդ թվում հանրային տեղեկատվությունների տարածումը, իրազեկումը և ուսուցումը, ինչպես նաև հակաականային գործողություններում համայնքի հետ կապի ապահովումը:

ԱՎԻ-ի խնդիրն է ապահովել համայնքների տեղեկացվածությունն ականների և ՊՊՄ-ների վտանգների մասին և հորդորել նրանց այնպիսի վարքագիծ դրսևորել, որը կնվազեցնի մարդկանց, գույքին և շրջակա միջավայրին հասցվող վնասը: Նպատակն է վնասը նվազեցնել մի այնպիսի աստիճանի, որ մարդիկ կարողանան անվտանգ ապրել, վերարտադրել մի այնպիսի միջավայր, ուր տնտեսական և սոցիալական զարգացումը կարող է տեղի ունենալ՝ ազատված լինելով ականների տարածմամբ պարտադրվող սահմանափակումներից:⁴

ԱՎԻ-ն ականազերծմանը զուգահեռ (ներառյալ տեխնիկական հետազոտումը, քարտեզագրումը, ականների և ՊՊՄ-ների վնասազերծումը, նշագրումը, հետ-մաքրման փաստաթղթերը և վնասազերծված հողերի հանձնումը) նպաստում է ականների վտանգի կրճատմանը՝ նվազեցնելով ֆիզիկական վնասի վտանգն այն ականների և ՊՊՄ-ների պատճառով, որոնք *արդեն* տեղադրված են հողատարածքներում: Քարոզչությունը և կուտակված ականների վնասազերծումը նպատակ ունեն կանխարգելելու ականների հետագա կիրառումը: Տուժածներին տրամադրվող աջակցությունն առնչվում է ականների/ՊՊՄ-ների վտանգը վերապրած մարդկանց խնամքին, վերականգնմանը և վերաինտեգրմանը: Ականազերծման գործողությունների, ականների վտանգի կրճատման և ԱՎԻ-ի միջև փոխհարաբերությունը բերված է Նկար 1-ում:



Նկար 1. Հարաբերակցությունը ԱՎԻ, ականների վտանգի կրճատման և ականազերծման գործողությունների միջև

4. ՄԱԿ-ի հակաականային գործունեություն, 2001/2005թթ. ռազմավարություն, աջակցություն ականազերծման գործողություններին, Գլխավոր քարտուղարի զեկույցը Գլխավոր ասսամբլեային, A/56/448/Add 1, Նյու Յորք, 16-ը հոկտեմբերի 2001թ.:

Սովորաբար ԱՎԻ-ն չպետք է մեկուսի գործողություն լինի: Այն ականագերծման գործողությունների պլանավորման և իրականացման մի ամբողջ մասն է կազմում: Այսպիսով, ստորև բաժին 6-ում նկարագրված ԱՎԻ նախագծերի կառավարումը հանդես է գալիս որպես ականագերծման գործողությունների ընդհանուր կառավարման մի մաս:

ԱՎԻ-ն ունի երեք բաղադրիչ՝ հանրային տեղեկությունների տարածում, ուսուցում և վերապատրաստում, ականագերծման գործողությունների գծով համայնքային կապ: Դրանք լրացուցիչ են և համալրում են միմյանց: Ստորև բերված է բոլոր երեք բաղադրիչների նկարագրությունը:

4.1. Հանրային տեղեկությունների տարածում

Ականագերծման գործողությունների մեջ հանրային տեղեկությունները վերաբերում են այն տեղեկություններին, որոնք նկարագրում են ականների և ՊՊՄ-ների իրավիճակը և հիմնականում կիրառվում են շահառուների լայն խմբերին տեղեկացնելու և թարմ տվյալներով իրազեկելու համար, ներառյալ վտանգի ենթարկվող ազգաբնակչությանը: Նման տեղեկությունների ուշադրության կենտրոնում կարող են լինել տեղական վտանգի նվազեցման հաղորդագրությունները կամ էլ կարող են անդրադառնալ ավելի լուրջ ազգային խնդիրներին, ինչպիսիքն են համաձայնեցումն օրենսդրության հետ կամ էլ ականագերծման գործողությունների ծրագրի նկատմամբ հանրային աջակցության բարձրացումը:

Հանրային տեղեկությունների տարածումը որպես ԱՎԻ մաս առաջին հերթին վերաբերում է հանրային տեղեկությունների գործողություններին, որոնք նպատակ ունեն նվազեցնել ականների և ՊՊՄ-ների պատճառած վնասների վտանգը՝ բարձրացնելով անհատներին և համայնքներին սպառնացող վտանգի մասին իրազեկումը և խթանելով վարքագծային փոփոխություն: Հիմնականում դա հաղորդակցման միակողմանի ձև է, որը փոխանցվում է զանգվածային լրատվամիջոցների միջոցով, որոնք կարող են համապատասխան տեղեկություններ և խորհուրդ տրամադրել սակավաձախս կերպով և ժամանակին:

Հանրային տեղեկությունների տարածման նախագծերը կարող են “մեկուսացած” ԱՎԻ նախագծեր լինել, որոնք անկախ կերպով են իրականացվում և հաճախ նախորդում են ականագերծման այլ գործողություններին: Հակամարտությանը հաջորդող արտակարգ իրավիճակում, ժամանակի սահմանափակումների և ճշգրիտ տվյալների սակավության պատճառով, հանրային տեղեկությունների տարածումը հաճախ դառնում է վտանգի նվազեցման հետ կապված անվտանգության տեղեկությունների հաղորդման ամենագործառնական միջոցը: Հավասար իրավունքներով նրանք կարող են ականագերծման գործողությունների ծրագրի շրջանակներում վտանգի նվազեցման ավելի համապարփակ ռազմավարության մասը կազմել՝ սատարելով համայնքային ԱՎԻ-ի, ականագերծման կամ քարոզչության գործողություններին:

4.2. Ուսուցում և վերապատրաստում

ԱՎԻ-ում “ուսուցում և վերապատրաստում” տերմինը վերաբերում է ուսուցման և վերապատրաստման բոլոր գործողություններին, որոնք նպատակ ունեն նվազեցնել ականների և ՊՊՄ-ների պատճառած վնասների վտանգը՝ բարձրացնելով անհատներին և համայնքներին սպառնացող վտանգի մասին իրազեկումը և հորդորելով վարքագծային փոփոխություն: Ուսուցումն ու վերապատրաստումը երկկողմանի գործընթաց է, որը ներառում է գիտելիքների, մոտեցումների և պրակտիկաների փոխանցումն ու ստացումն ուսուցանման և սովորելու միջոցով:

Ուսուցման և վերապատրաստման գործողությունները կարող են իրականացվել պաշտոնական և ոչ պաշտոնական միջավայրերում: Օրինակ՝ այստեղ կարող է ընդգրկվել դպրոցներում ուսուցչից երեխայի կրթումը, տանը ծնողից երեխաների կրթումը և երեխաներից ծնողի կրթումը, երեխայից երեխայի կրթումը, աշխատավայրում և ժամանցի վայրերում մերձավորից մերձավորի կրթումը, ականների և ՊՊՄ-ների անվտանգության գծով վերապատրաստումը մարդասիրական օգնության աշխատակիցների⁵ համար և ականների ու ՊՊՄ-ների անվտանգության մասին հաղորդագրությունների ընդգրկումն աշխատանքային հիգիենայի և անվտանգության կանոնավոր պրակտիկայում:

4.3. Ականազերծման գործողությունների մասով համայնքային կապ

Ականազերծման գործողությունների մասով համայնքային կապը վերաբերում է այն համակարգին ու գործընթացներին, որոնք կիրառվում են՝ ականների և ՊՊՄ-ների առկայության, ինչպես նաև դրանց հնարավոր վտանգի վերաբերյալ տեղեկություններ փոխանակելու ազգային կառույցների, ականազերծման գործողությունների կազմակերպությունների և համայնքների միջև: Այն համայնքներին հնարավորություն է տալիս տեղեկացված լինելու ականազերծման որևէ նախագծվող գործողության մասին, այդ առաջադրանքի բնույթի և տևողության մասին, ինչպես նաև այն տարածքների ստույգ տեղանքի մասին, որոնք նշագրվել կամ ականազերծվել են:

Բացի դրանից, այն համայնքներին հնարավորություն է տալիս տեղեկացնելու տեղի իշխանություններին և ականազերծման գործողություններով զբաղվող կազմակերպություններին ականապատված տարածքների տեղանքի, ծավալի և հետևանքների մասին: Այս տեղեկությունները կարող են մեծապես աջակցել ականազերծման շարունակական գործողությունների նախագծմանը, օրինակ՝ տեխնիկական հետազոտում, նշագրում և ականազերծում և անհրաժեշտության դեպքում աջակցության ապահովում ականներից/ՊՊՄ-ներից տուժածներին: Ականազերծման գործողությունների մասով համայնքային կապը զեկուցման վճռորոշ հաղորդակցություն է ստեղծում ծրագրի նախագծման անձնակազմի համար և հնարավոր է դարձնում տեղայնացված վտանգի նվազեցման և այլ համապատասխան ռազմավարությունների մշակումը: Ականազերծման գործողությունների մասով համայնքային կապը նպաստակ ունի ապահովելու, որ ականազերծման գործողությունների նախագծերը բավարարեն համայնքային կարիքներն ու գերակայությունները:

Ականազերծման գործողությունների մասով համայնքային կապը պետք է իրագործվի ականազերծման գործողություններ իրականացնող բոլոր կազմակերպությունների կողմից: Դրանք կարող են լինել ԱՎԻ-ի գծով մասնագիտացած կազմակերպություններ կամ էլ ականազերծման գործողություններով զբաղվող կազմակերպության ներսում ԱՎԻ-ի գծով մասնագիտացած անհատներ և/կամ “ստորաբաժանումներ”:

Ականազերծման գործողությունների մասով համայնքային կապը տուժած բնակչության հետ կարող է մեկնարկել նախքան ականազերծման գործողությունները և կարող է համայնքային մակարդակում նպաստել վտանգի գնահատման, տեղեկությունների կառավարման և տեղային վտանգի նվազեցման ռազմավարությունների մշակման կարողության ձևավորմանը: Այս ամենը կարող է աջակցել համայնքներին անհրաժեշտ տեղեկություններ հավաքագրելու գործում՝ ներգործելու համապատասխան շահագրգիռ կողմերի վրա և սատարելու ականազերծման գործողությունների և այլ աջակցության միջամտությունը:

5. Ականների անվտանգության նախագիծ, ՄԱԿԱՕ:

5. Ականազերծման գործողությունների ծրագրի պլանավորում

5.1. Ականազերծման գործողությունների ընդհանուր գնահատման (ԱԳԸԳ) գործընթաց

Ականազերծման գործողությունների ծրագիր մշակելու մասին որոշումը սովորաբար կայացվում է հավաքագրված բավականաչափ տեղեկությունների արդյունքում, որը վկայում է նման անհրաժեշտության մասին: Նման տեղեկություններ հավաքագրելու գործընթացը պաշտոնական/միտումնավոր և ոչ պաշտոնական գործողությունների համակցություն է և կարելի է անվանել Ականազերծման գործողությունների ընդհանուր գնահատման (ԱԳԸԳ) գործընթաց: Սա ցանկացած նպատակահարմար միջոցներով ականների և ՊՊՄ-ների պատահարների և միջադեպերի մասին տեղեկությունների, ինչպես նաև ականների և ՊՊՄ-ների վերաբերյալ այլ տեղեկությունների հավաքագրման շարունակական գործընթաց է: Գործընթացն արդյունավետորեն սկիզբ է առնում, երբ ստացվում է առաջին տեղեկությունն առ այն, որ երկրում առկա է ականների կամ ՊՊՄ-ների խնդիր, և արդյունավետորեն ավարտվում է, երբ արդեն հայտնի է ականների և ՊՊՄ-ների մասին ողջ տեղեկությունները:

ԱԳԸԳ գործընթացը՝

ա. Տեղեկություններ է հավաքագրում և վերլուծում՝ գնահատելու ականների և ՊՊՄ-ների խնդրի ծավալն ու հետևանքները տուժած երկրում և առանձին համայնքներում;

բ. Տեղեկություններ է ապահովում, որոնց հիման վրա որոշում է ընդունվում ականների կամ ՊՊՄ-ների տարածման զեկուցած և/կամ կասկածելի տարածքները, ինչպես նաև դրանց քանակը և պայթուցիկ վտանգների տեսակները հետազոտելու անհրաժեշտության մասին;

գ. Ընդհանուր տեղեկություններ է հավաքագրում, օրինակ՝ անվտանգության իրավիճակ, տեղանք, հողի ծածկույթի առանձնահատկություններ, կլիմա, մայրուղիներ, ենթակառուցվածքային և տեղական աջակցման հաստատություններ, նպաստելու ականազերծման հետագա գործողություններին և նախագծերին:

ԱԳԸԳ գործընթացի ժամանակ հավաքագրված տեղեկությունները պետք է ապահովեն այդ խնդրի (առկայության դեպքում) չափերի և ծավալի մասին աճող ցուցանիշը, դրա բավարարման համար անհրաժեշտ ռեսուրսների գնահատումը, դրա լուծման համար ազգային կարողություններն ու ներուժը, ինչպես նաև արտաքին աջակցության անհրաժեշտության գնահատումը, ներառյալ ֆինանսական, մարդկային հմտությունների, նյութական և տեղեկատվական աջակցություն: Լիարժեք ճանաչում կտրվի ընթացիկ աշխատանքներին, ներառյալ տեղական համայնքային ԱՎԻ և ականազերծման գործողությունները, որոնք սովորաբար նախորդում են ականազերծման գործողությունների ծրագրի ստեղծմանը:

Որոշակի փուլում հավաքագրված տեղեկությունները բավարար կլինեն, որպեսզի անհրաժեշտ աջակցությամբ հնարավորություն ընձեռնվի ազգային իշխանություններին՝ սահմանելու գերակայություններ և մեկնարկելու ականազերծման գործողությունների հետևողական ազգային ծրագրի և նախագծի մշակումը, որն ըստ պահանջի կընդգրկի ԱՎԻ, ականազերծում, կուտակված ականների վնասազերծում, աջակցություն տուժածներին և քարոզչություն:

ԱԳԸԳ գործընթացի պահանջների վերաբերյալ ուղենիշները բերված են ՀԱԳՄՉ 08.10-ում:

5.2. Ականազերծման գործողությունների տվյալների շարունակական հավաքագրում և գնահատում

Նախքան ականազերծման գործողությունների նախագծերի, գործողությունների և առաջադրանքների իրագործումը սովորաբար պահանջվում է մանրամասն տվյալների հավաքագրում և գնահատում: ԱՎԻ-ի դեպքում սա ներառում է կարիքների գնահատում (ուղենիշը տես ՀԱԳՄՉ 08.50-ում), ականների և ՊՊՄ-ների վնասազերծման դեպքում սա ներառում է տեխնիկական հետազոտում (ուղենիշը տես ՀԱԳՄՉ 08.20-ում), տուժածների աջակցության գծով սա ներառում է ականների/ՊՊՄ-ների տուժածների և նրանց կարիքների վերլուծություն: Կարող են գոյություն ունենալ տվյալների հավաքագրման այլ գործողություններ, օրինակ՝ Ցամաքային ականների/ֆուգասների ազդեցության հետազոտություն (ՑԱԱՀ), առաջադրանքների գնահատում և նախագծում կամ համայնքային այլ ուսումնասիրություններ, ինչպես նաև ականազերծման գործողությունների մասով համայնքային ընթացիկ կապ: Այս ամենը ԱԳԸԳ գործընթացի, ինչպես նաև ակտիվ դիտարկման գործընթացի մի մասն են կազմում՝ սահմանելու և մոնիտորինգի ենթարկելու այն խնդիրները, որոնց հետ առնչվում են տուժած համայնքները:

5.3. Նախագծի իրագործում

ԱԳԸԳ գործընթացի շնորհիվ ձեռք բերած տեղեկություններն օգտագործելով՝ պլանավորվում, իրագործվում, մոնիտորինգի են ենթարկվում և գնահատվում են ականազերծման գործողությունների նախագծերն ու գործողությունները: Հնարավորության դեպքում սա պետք է կատարվի ամբողջապես միավորված կերպով՝ այն կազմակերպությունների մասնակցությամբ, որոնք համայնքների համատեղ այցելություններ են կատարում: Այս գործողություններ իրագործող կազմակերպությունները պետք է փոխանակեն տեղեկությունները և համակարգեն իրենց աշխատանքը: Օրինակ՝ թե ԱՎԻ և թե ականազերծման կազմակերպությունները պետք է ներգրավված լինեն տեղական համայնքներին վնասազերծված հողերի հանձնման աշխատանքներում:

Այն հարցը, թե արդյոք դեռ կա ականների և ՊՊՄ-ների առկայությամբ պայմանավորված վտանգը, պետք է շարունակաբար մոնիտորինգի ենթարկվի այնքան ժամանակ, մինչև այլևս չլինի ականազերծման գործողությունների պահանջը: Նմանապես պետք է շարունակական մոնիտորինգ իրականացվի ականներից/ՊՊՄ-ներից տուժածներին հետագա աջակցության պահանջի վերաբերյալ, մինչև նրանց հասանելի կղառնան բարձրագույն մատչելիության վերականգնողական ծառայություններն ու չափորոշիչները և մինչև նրանք լիովին կվերաինտեգրվեն հասարակության մեջ: Վերջին այս գործընթացը գնահատման մի մասն է կազմում:

Մարդասիրական միջամտության վաղ շրջանում հաճախ կարիք կառաջանա ԱՎԻ և ականազերծման նախագծերն իրագործել նախքան համապարփակ ՑԱԱՀ-ի իրականացումը: Նման դեպքերում ականազերծման պահանջները սահմանելու նպատակով տեղեկություններ հավաքագրող տեխնիկական հետազոտման թիմերը պետք է համագործակցեն կարիքների գնահատում իրականացնող ԱՎԻ կազմակերպությունների հետ՝ սահմանելու ականների և ՊՊՄ-ների վտանգները, գնահատելու համայնքային կարիքներն ու գերակայությունները և գնահատելու ականազերծման ու ԱՎԻ պահանջները:

6. ԱՎԻ նախագծի փուլային կառուցվածք

ԱՎԻ նախագծի փուլային կառուցվածքը նկարագրված է ստորև՝ Նկար 2-ում, իսկ առավել մանրամասն՝ Հավելված Գ-ում: Նախագծի փուլային կառուցվածքը բաղկացած է հինգ գործողություններից՝ տվյալների հավաքագրում և կարիքների գնահատում (տես ՀԱԳՄՉ 08.50), պլանավորում (տես ՀԱԳՄՉ 12.10), իրագործում (տես ՀԱԳՄՉ 12.20), մոնիտորինգ (տես ՀԱԳՄՉ 07.41) և գնահատում (տես ՀԱԳՄՉ 14.20):




Figure 2: the MRE project cycle

6.1. Տվյալների հավաքագրում և կարիքների գնահատում

Տվյալների հավաքագրման և կարիքների գնահատման իրականացման նպատակն է սահմանել, վերլուծել և ըստ գերակայության դասակարգել տեղի ականների և ՊՊՄ-ների վտանգները, գնահատել համայնքների կարողություններն ու խոցելի կողմերը և գնահատական տալ ԱՎԻ իրականացման տարբերակներին: Կարիքների գնահատումը բավարար տեղեկություններ կապահովի, որն անհրաժեշտ է արդյունքում ստացվող ԱՎԻ նախագծի խնդիրների, ծավալի և ձևի վերաբերյալ տեղեկացված որոշումներ կայացնելու համար:

Կատարյալ տարբերակում կարիքների գնահատումը կծագի բազմակողմանի ՑԱԱՀ-ից կամ էլ տեղեկությունների հավաքագրման այլ նմանատիպ գործողություններից, որոնք նպաստում են ԱԳԸԳ գործընթացին: Նման հանգամանքներում արդեն կարող է առկա լինել տեղեկությունների զգալի քանակություն, որը հավաքագրվել է հետազոտման ժամանակ: Սա կարող է մանրամասներ ընդգրկել ականների և ՊՊՄ-ների վտանգների վերաբերյալ, արձանագրված վնասվածքների թվաքանակի ու տեսակների, ականների ու ՊՊՄ-ների տարածման պատճառով սոցիալ-տնտեսական հետևանքների վերաբերյալ և տվյալներ ազգային ռեսուրսների վերաբերյալ, որոնք առկա են ԱՎԻ աջակցության համար: Այն կարող է նաև ներառել ականազերծման գործողությունների նախորդ և ընթացիկ միջամտությունների գնահատումը, այդ թվում նաև ԱՎԻ նախագծեր: Այնուամենայնիվ, հավանական չէ, որ ԱԳԸԳ գործընթացի ժամանակ որպես ազգային մակարդակով իրականացված ՑԱԱՀ-ի մի մաս հանդիսացող հավաքագրված տեղեկությունները պարունակեն բավականաչափ մանրամասներ՝ հաջողությամբ նախագծելու և համայնքային մակարդակում արդյունավետորեն իրագործելու ԱՎԻ նախագծեր: Դեպքերի մեծամասնությունում խորացված տվյալների հավաքագրում և վերլուծություն կպահանջվի՝ հաստատելու ՑԱԱՀ-ի ըթացքում հավաքագրված տվյալների ճշտությունն ու արդիականությունը: Լրացուցիչ տվյալները կնպաստեն ԱԳԸԳ գործընթացին և կապահովեն ավելի մանրամասն տեղեկություններ առավել մեծ կարիքի խնդիրների վերաբերյալ:

Շատ երկրներ չեն իրականացրել բազմակողմանի ՑԱԱՀ և կարող է գոյություն չունենալ ականների ու ՊՊՄ-ների տարածման ծավալի և բաշխման, ոչ էլ ականների ու ՊՊՄ-ների տարածման պատճառով սոցիալ-տնտեսական հետևանքների վերաբերյալ ռազմավարական տեսակետ: Նման հանգամանքներում կարիքների գնահատման ծավալն ու ձևը պետք է ավելի ընդարձակ լինեն՝ պահանջնելով ավելի շատ ռեսուրսներ և ժամանակ: Սակայն կարիքների գնահատման խնդիրներն ու արդյունքն անփոփոխ կմնան՝ ապահովել այնպիսի տեղեկություններ, որն անհրաժեշտ է արդյունքում ստացվող ԱՎԻ նախագծի խնդիրների, ծավալի և ձևի վերաբերյալ տեղեկացված որոշումներ ընդունելու համար:

Տվյալների համակարգված հավաքագրումն ու վերլուծությունը կարևոր են ականազերծման բոլոր գործողությունների արդյունավետ իրականացման համար: ԱՎԻ կարիքների գնահատման համար տվյալների հավաքագրումը կատարյալ տարբերակում պետք է իրականացվի և *վերլուծության ենթարկվի* ականազերծման գործողությունների իրականացնող այլ կազմակերպությունների և ԱԳԱՄ-ի հետ *համատեղ*: Հավաքագրված տվյալները պետք է պարբերաբար թարմացվեն՝ պարզելու, արդյոք փոխվել է ականների և ՊՊՄ-ների վտանգը: ԱՎԻ գծով տվյալների հավաքագրման և կարիքների գնահատման վերաբերյալ ուղենիշը բերված է ՀԱԳՄՉ 08.50-ում:

6.2. Պլանավորում

ԱՎԻ-ի ռազմավարական պլանավորումը պետք է իրականացվի որպես ականագերծման գործողությունների պլանավորման ընդհանուր գործընթացի մի մաս՝ ինչպես դա նկարագրված է բաժին 5-ում: Ականապատված համայնքի մակարդակում ԱՎԻ պլանավորումը պետք է իրականացվի համատեղ կամ սերտ կապի մեջ ականագերծման այլ գործողությունների պլանավորման հետ: Համայնքային մակարդակում պլանավորումը կարող է իրականացվել հենց ականապատված համայնքների հետ միասին, օրինակ՝ որպես “ապահով գյուղ” նախագծային ռազմավարության մի մաս:

Առանձին ԱՎԻ նախագծի պլանավորման փուլի նպատակն է սահմանել կարիքների բավարարման ամենաարդյունավետ ուղիները: Նաձագիծը պետք է սահմանի ընդհանուր խնդիրները, հիմնադրի գործողությունների և առաջադրանքների պլանը, որն ուղղված է այդ խնդիրների լուծմանը, սահմանի հաջողության համար հարմար միջոցառումները և հիմնի մոնիտորինգի և գնահատման համակարգեր:

Պլանավորման փուլը կրնոգրկի նաև նախապատրաստական գործողություններ, օրինակ՝ տեղական ունակությունների հատկորոշում, ռեսուրսների կենտրոնացում, նպատակահարմար կարողությունների մշակում, համապատասխան անձնակազմի ընդունելություն և վերապատրաստում, ինչպես նաև ԱՎԻ մեթոդների և գործիքների մշակում և դաշտային փորձարկում:

Պլանավորման փուլը պետք է ներառի բոլոր շահագրգիռ կողմերը և պետք է հաշվի առնի ականագերծման գործողությունների ազգային ռազմավարությունը և առկայության դեպքում մարդասիրական ու զարգացման ավելի ընդարձակ ռազմավարությունները: Նախագիծը, նպատակները, գործողություններն ու պարտավորությունները պետք է համահունչ լինեն ԱՎԻ նախագծում ընդգրկված բոլոր կողմերի կարիքներին և ակնկալիքներին:

Պլանավորումը չպետք է լինի միանվագ գործողություն, այլ շարունակական գործընթաց, որը կանոնավոր կերպով կրկնվում է: ԱՎԻ կազմակերպությունների պլանավորումն իրականացնելու վերաբերյալ ուղենիշը բերված է ՀԱԳՄՉ 12.10-ում:

6.3. Իրագործում

ԱՎԻ նախագծի հաջողությունը կախված է ըստ պլանավորածի ԱՎԻ գործիքների ու մեթոդների ճիշտ կիրառումից, ի պատասխան փոփոխվող կարիքներին այդ գործիքներն ու մեթոդները հղկելու և հարմարացնելու կարողությունից, ինչպես նաև ժամանակին առաջընթացի մասին զեկուցումից և քաղած դասերից:

Սահմանափակ ծավալով և տևողությամբ ԱՎԻ նախագծերի համար իրագործման փուլը կարող է հարաբերականորեն կարճ լինել: Սակայն զանազան տևողությամբ մի քանի փուլ ունեցող լայնածավալ նախագծերի համար իրագործումը կարող է բարդ է դժվար կառավարելի լինել: Դա կարող է ներառել միջազգային անձնակազմից տեղացիներին դեկավարելու պարտականությունների փոխանցումը, ֆինանսավորման ձևակերպումները կարող են փոփոխվել, իսկ գործառնական միջավայրը կարող է բարելավվել բաց հակամարտությունից կամ մարդասիրական արտակարգ իրավիճակից դեպի ավելի կայուն իրավիճակ, որի ուշադրության կենտրոնում է զարգացումը՝ պահանջներով ԱՎԻ գործիքների և մեթոդների փոփոխություն, որոնք կիրառվում են վտանգի առջև կանգնած բնակչության հետ հաղորդակցվելիս:

ԱՎԻ նախագծերն ընդհանուր առմամբ կարող են դասակարգվել երեք առանձին, սակայն միմյանց լրացնող գործողությունների՝ հանրային տեղեկությունների տարածում, ուսուցում ու վերապատրաստում և ականագերծման գործողությունների մասով համայնքային կապ: Այս բոլոր գործողությունների բնույթը բավականին տարբեր է, իսկ դրանց իրականացման վերաբերյալ ուղենիշը բերված է ՀԱԳՄՉ 12.20-ում:

6.4. Մոնիտորինգ

Մոնիտորինգն ԱՎԻ նախագծային փուլի էական մասն է կազմում: Հավատարմագրման և գնահատման հետ միասին այն շահագրգիռ կողմերին ապահովում է անհրաժեշտ վստահությամբ առ այն, որ ԱՎԻ նախագծերը ձեռք են բերում հանաձայնեցված նպատակներն ու խնդիրները ժամանակին և համապատասխան ու մատչելի ձևով: Մոնիտորինգը շարունակական գործընթաց է, որն իրականացվում է իրագործման ողջ ընթացքում՝ ԱՎԻ գործիքների և մեթոդների կիրառման, համապատասխանության և արդյունավետության վերաբերյալ հետադարձ կապ և տեղեկություններ ապահովելու համար:

Մոնիտորինգը սովորաբար ներառում է ԱՎԻ կազմակերպության կարողությունների (մարդկանց, ընթացակարգերի, գործիքների և մեթոդների) և այդ կարողությունների կիրառման գնահատում: Արտաքին մոնիտորինգը պետք է կիրառվի՝ լրացնելու ԱՎԻ կազմակերպության սեփական ներքին Որակի կառավարման (ՈԿ) համակարգը: Արտաքին մոնիտորինգը պետք է հաստատի ԱՎԻ կազմակերպության Որակի ապահովման (ՈԱ) ընթացակարգերը և ներքին Որակի վերահսկման (ՈՎ) ստուգումները, բայց այն երբեք չպետք է փոխարինի կազմակերպության պարտականությունն ապահովելու իր կողմից ընտրված ԱՎԻ գործիքների և մեթոդների պատշաճ կիրառումը, համապատասխանությունը և արդյունավետությունը:

Մոնիտորինգը չպետք է սահմանափակվի որոշված նպատակների ձեռքբերման չափմամբ և զեկուցմամբ, այլ պետք է խթանի գնահատման և վերանայման գործընթացը՝ արտացոլելու փոփոխվող ԱՎԻ կարիքները և/կամ տեղական հանգամանքները:

ԱՎԻ ծրագրերի և նախագծերի արտաքին և ներքին մոնիտորինգի վերաբերյալ ուղենիշը բերված է ՀԱԳՄՉ 07.41-ում:

6.5. Գնահատում

Գնահատումը “...մի գործընթաց է, որը փորձում է հնարավորինս համակարգված կերպով և օբյեկտիվորեն պարզորոշել միջամտության կամ քաղաքականության արժեքը կամ նշանակալիությունը: Արժեքի կամ նշանակալիության գնահատականն առաջնորդվում է սահմանված (և համաձայնեցված) չափանիշների հղմամբ, օրինակ՝ գործողությունների նպատակահարմարությունը, օպերատիվությունը, արդյունավետությունը, հետևանքները և համապատասխանությունը՝ հաշվի առնելով հատկանշված նպատակները: Գնահատումը պետք է արժանահավատ և օգտակար տեղեկություններ ապահովի՝ հնարավորություն տալով քաղած դասերի ընդգրկումը նախագծի գործընկերների և դոնորների կողմից որոշումների կայացման գործընթացում⁶:

ԱՎԻ-ի առումով գնահատումը նպատակ ունի թիրախային համայնքներում չափել գիտելիքների, մոտեցումների և փորձառությունների ձեռքբերումը, գնահատել առանձին գործիքների և մեթոդների արդյունքն ու կիրառումը, ինչպես նաև այդ գործիքների և մեթոդների առնչությամբ փոփոխությունների կատարման առաջարկություններով հանդես գալ: Գործնականում, սովորաբար, դժվար է ԱՎԻ գնահատում իրականացնել, քանի որ կարող է հնարավոր չլինել պարզել կապը *պատճառի* (օրինակ՝ ԱՎԻ միջամտություն) և *հետևանքի* (օրինակ՝ վարքագծային փոփոխություն) միջև:

Սովորաբար, գնահատումն իրականացվում է նախագծի ավարտից հետո, սակայն կարող է նաև իրագործվել նախագծի ողջ ընթացքի ստույգ ժամանակահատվածներում՝ գնահատելու դրա փաստացի ազդեցությունը և հիմնավորելու դրա շարունակելիությունը:

ԱՎԻ ծրագրերի և նախագծերի գնահատման վերաբերյալ ուղեցույցը բերված է ՀԱԳՄՉ 14.20-ում:

6. UNICEF-ի “Օրագրի քաղաքականության և ընթացակարգերի ձեռնարկ” (2001թ.):

7. ԱՎԻ կազմակերպությունների և գործողությունների հավատարմագրում

Կազմակերպության հավատարմագրումն այն ընթացակարգն է, որի միջոցով ԱՎԻ կազմակերպությունը պաշտոնապես ճանաչվում է որպես իրավասու և ունակ՝ ապահով կերպով, արդյունավետորեն և բարձր արտադրողականությամբ նախագծելու և կառավարելու ԱՎԻ գործողություններ: Ականագերծման գործողությունների ծրագրերի մեծամասնության համար ԱԳԱՄ-ն է այն մարմինը, որն ապահովում է հավատարմագրումը: Միջազգային կազմակերպությունները, ինչպիսիք են ՄԱԿ-ը կամ տարածաշրջանային մարմինները, նույնպես կարող են ներմուծել հավատարմագրման նախագծեր: Հավատարմագրումը կտրվի երկրի տարածքում գտնվող կազմակերպության գլխամասային գրասենյակին սահմանափակ տևողությամբ՝ սովորաբար երկուսից-երեք տարի ժամկետով:

Գործողությունների հավատարմագրումն այն գործընթացն է, որի միջոցով ԱՎԻ կազմակերպությունը պաշտոնապես ճանաչվում է իրավասու և ունակ՝ իրականացնելու ԱՎԻ առանձին գործողություններ: Կազմակերպությունը կստանա հավատարմագրում գործառնական յուրաքանչյուր կարողության վերաբերյալ, որը պահանջվում է առանձին ԱՎԻ գործողության իրագործման համար, օրինակ՝ փոխգործակցություն համայնքի հետ կամ հանրային տեղեկությունների տարածում: Նման գործառնական հավատարմագրման շնորհումը ենթադրում է, որ այդ կարողությունները չեն փոփոխվելու սկզբնական հավատարմագրման ծավալի կամ նպատակի սահմաններից դուրս:

ԱՎԻ կազմակերպությունների և գործողությունների հավատարմագրման վերաբերյալ ուղեցույցը բերված է ՀԱԳՄՉ 07.31-ում:

8. Ուղղորդող սկզբունքներ

8.1. ՀԱԳՄՉ-երի ուղղորդող սկզբունքներ

ՀԱԳՄՉ-երի մշակումն ու կիրառումն առաջնորդվում են հինգ ուղղորդող սկզբունքներով. առաջին՝ ազգային իշխանությունների՝ ազգային ծրագրերում ազգային չափորոշիչների կիրառման իրավունք, երկրորդ՝ չափորոշիչները պետք է պաշտպանեն ամենամեծ վտանգի մեջ գտնվողներին, երրորդ՝ ականագերծման գործողությունների համապատասխան չափորոշիչներ մշակելու, պահպանելու և կիրառելու ազգային կարողության ստեղծման շեշտադրում, չորրորդ՝ միջազգային այլ նորմերին և չափորոշիչներին համապատասխանեցման պահպանում և հինգերորդ՝ համապատասխանեցում միջազգային կոնվենցիաներին և համաձայնագրերին: Այս ուղղորդող սկզբունքները նկարագրված են ՀԱԳՄՉ 01.10-ում:

8.2. Ուղղորդող սկզբունքներ ԱՎԻ-ի գծով

ԱՎԻ քաղաքականությունը, ծրագրերն ու նախագծերը կազմավորվում են միջազգային, ազգային և տեղական մակարդակի բազմաթիվ գործոններով և խնդիրներով: UNICEF-ի մի նախագիծ որոշ մանրամասնությամբ սահմանել է այդ գործոններից և խնդիրներից յուրաքանչյուրը և խրախուսել դրանց կիրառումը ԱՎԻ նախագծի ողջ ընթացքի բոլոր փուլերում՝ որպես ուղղորդող սկզբունքներ:

Հղում կատարելու պարզության համար այդ ուղենիշ խնդիրներն ու սկզբունքները կարելի է խմբավորվել ըստ ութ բնորոշ պահանջների՝ շահագրգիռ կողմերի ներգրավում, համակարգման պահանջներ, ինտեգրում, համայնքային մասնակցություն և լիազորություններ, տեղեկությունների կառավարում և փոխանակում, համայնքների ընտրություն, կրթման/իրազեկման գործիքներ ու մեթոդներ և ԱՎԻ նախագծերի իրականացման համար պատասխանատու անձանց համապատասխան և արդյունավետ վերապատրաստման ապահովում: Այս սկզբունքները հաշվի են առնված ԱՎԻ-ի գծով յուրաքանչյուր ՀԱԳՄՉ-ում և որոշ դեպքերում դրանք հիմք են ապահովում այն ուղենիշերի շրջանակի համար, որոնք արձարծվում են փաստաթղթում: Դրանք առավել մանրամասնորեն մեկնաբանվում են ստորև:

8.2.1. Շահագրգիռ կողմերի ներգրավում

Ականազերծման գործողությունների մեջ ականներից տուժած համայնքներն առաջնային շահագրգիռ կողմերն են և պետք է ճանաչվեն որպես այդպիսիք: Այլ շահագրգիռ կողմերն են ականազերծման գործողությունների կազմակերպությունները, իշխանությունները և հանրային հաստատությունները, օգնության գործակալությունները և համայնքային խմբերը: Շահագրգիռ կողմերի մասնակցությունն անհրաժեշտ է նախագծի ողջ ընթացքի յուրաքանչյուր փուլում՝ ապահովելու, որ

- ա. բավարարված լինեն ականներից տուժած համայնքների և խմբերի կարիքները;
- բ. հաշվի առնվեն ազգային և տեղական տնտեսական ու զարգացման գերակայությունները;
- գ. ականազերծման գործողությունները սատարեն և հնարավոր դարձնեն մարդասիրական և զարգացման գործողությունները:

Գենդերային ուղղորդումը պետք է լինի շահագրգիռ կողմերի ներգրավման կարևոր նկատառումներից մեկը:

8.2.2. Համակարգում

ԱՎԻ-ն պետք է լավ համակարգված լինի՝ թե տարբեր նախագծերի միջև և թե նախագծերի կազմում: Արդյունավետ համակարգումը հնարավոր կդարձնի մանկավարժական բովանդակության հետևողականությունը, կօպտիմալացնի ռեսուրսների կիրառումը և կնվազեցնի ջանքերի ցանկացած կրկնություն:

8.2.3. Ինտեգրում

ԱՎԻ գործողությունները պետք է ամբողջապես ինտեգրված լինեն ականազերծման գործողությունների, մարդասիրական և զարգացման այլ գործողությունների հետ՝ համատեղ ջանքերով արդյունքի հասնելու համար:

8.2.4. Համայնքային մասնակցություն և լիազորություններ

ԱՎԻ-ում առաջնային շահագրգիռ կողմերն են ականներից տուժած համայնքների անդամները, և մասնակցության միջոցով համայնքներին լիազորություններով օժտելու հայեցակարգը պետք է ձևավորի ԱՎԻ նախագծերը նախագծի ողջ ընթացքում:

8.2.5. Տեղեկությունների կառավարում

ԱՎԻ նախագծերի արդյունավետ կառավարումը պահանջում է ճշգրիտ, համապատասխան և ժամանակին տրամադրվող տեղեկություններ: Տեղական, ազգային և միջազգային մակարդակներում տեղեկությունների շատ աղբյուրներ կան, իսկ արդյունքում հավաքագրված տվյալների կարիքն ունի անհատների մի մեծ խումբ, ովքեր ներգրավված են ԱՎԻ նախագծերի պլանավորման, իրագործման, մոնիտորինգի և գնահատման մեջ:

ԱԳԱՄ-ն ու ԱՎԻ կազմակերպությունները պետք է ստեղծեն և պահպանեն տեղեկությունների կառավարման արդյունավետ համակարգեր: Ականազերծման գործողությունների տեղեկությունների կառավարման ՄԱԿ-ի համակարգը՝ Ականազերծման գործողությունների տեղեկատվական կառավարման IMSMA համակարգը մշակվել է՝ ապահովելու դաշտային և գլխամասային գրասենյակի մակարդակներում ժամանակին համապատասխան տեղեկություններ հավաքագրելու, համադրելու և բաշխելու կարողությունը: IMSMA-ն հասանելի է ականազերծման գործողությունների բոլոր ծրագրերին:

Տեղեկատվական կարիքների, տվյալների կառավարման և ականազերծման գործողությունների ծրագրերում, այդ թվում նաև ԱՎԻ նախագծերում, տեղեկատվական համակարգերի կիրառման վերաբերյալ ուղեցույցը բերված է ՀԱԳՄՉ 05.10-ում:

8.2.6. Համապատասխան ընտրություն

Ականազերծման գործողությունների ծրագրերը պետք է համապատասխան համատեքստ ունենան և հարզեն/ճանաչեն ականներից տուժած համայնքների տարբեր կարիքներն ու գերակայությունները և տեղական տարբեր մշակութային արժեքներն ու նորմերը:

8.2.7. Կրթում/Իրազեկում

Համապատասխան բովանդակությամբ նպատակահարմար և արդյունավետ ուսումնական մեթոդաբանությունների մշակումը ցանկացած ԱՎԻ նախագծի էական մասն է կազմում դրա ողջ ընթացքում:

8.2.8. Վերապատրաստում

Պլանավորման և նախապատրաստման փուլերի ընթացքում ԱՎԻ կազմակերպության ղեկավարման կարևոր պարտավորություններից է անձնակազմի հավաքագրումն ու վերապատրաստումը: Այդ պարտավորությունը շարունակվում է իրականացման ողջ ընթացքում, մասնավորապես եթե միջազգային անձնակազմից պարտականությունները փոխանցվում են ազգային աշխատակիցներին:

9. Պարտավորություններ

9.1. Միավորված ազգերի կազմակերպություն

ՄԱԿ-ն ընդհանուր պատասխանատվություն է կրում ապահովելու և խրախուսելու ականազերծման գործողությունների ծրագրերի արդյունավետ կառավարումը՝ շարունակաբար կատարելագործելով ՀԱԳՄՉ-ները՝ արտացոլելու ականազերծման գործողությունների լրամշակվող նորմերն ու փորձառությունները և ընդգրկելով միջազգային կանոնակարգերում, պահանջներում ու համաձայնագրերում կատարված փոփոխությունները, ներառյալ Երեխաների իրավունքների կոնվենցիան (1989) և Կանանց դեմ բռնությունների խտրականությունների վերացման կոնվենցիան (1979): ՄԱԿԱԾ-ը Միավորված ազգերի կազմակերպության Քարտուղարության կազմում այն գրասենյակն է, որը միջազգային հանրության առջև պատասխանատու է ՀԱԳՄՉ-երի մշակման և պահպանման համար: Մանկական հիմնադրամ UNICEF-ը ՄԱԿ-ի կազմում ԱՎԻ-ի գծով կարևոր մի հանգույց է և պատասխանատու է ՀԱԳՄՉ-ներում ԱՎԻ բաղադրիչի մշակման, վերանայման և լրամշակման համար:

Առանձին իրավիճակներում և պահերին ՄԱԿ-ը կարող է ստանձնել ԱԳԱՄ-ի պարտականությունների մի մասը կամ դրանք ամբողջությամբ և իրականացնել ԱԳԱՄ-ի գործառնությունների մի մասը կամ դրանք ամբողջությամբ, այդ թվում նաև հավատարմագրման պարտավորությունը:

ՄԱԿ-ը կիրառում է ՀԱԳՄՉ-ները ականազերծման գործողությունների իր ծրագրերում, գործողություններում և պայմանագրերում: Նման հանգամանքներում, երբ ՀԱԳՄՉ-ներից մեկը կամ մի քանիսը նպատակահարմար չեն համարվում, ապա ՄԱԿ-ն ապահովում է այլընտրանքային մանրամասներ, պահանջներ և ուղեցույց:

ՄԱԿ-ը պետք է ապահովի, որպեսզի բավարարվեն ականներից տուժած համայնքների կարիքները, և համապատասխան ԱՎԻ նախաձեռնվի ականազերծման գործողությունների բոլոր նոր կամ գործող ծրագրերում⁷:

ՄԱԿ-ը պետք է ապահովի, որպեսզի ականների անվատնագության վերապատրաստում տրամադրվի այն անձանց, ովքեր աշխատում են ականապատված երկրներում ՄԱԿ-ի գրասենյակներում կամ էլ ՄԱԿ-ի անունից գործողվում են այնտեղ:

7. UNICEF-ի Ականազերծման գործողությունների ռազմավարության թիվ 1.1 նպատակ, 2002/2005թթ, էջ 9:

9.2. Տարածաշրջանային կազմակերպություններ

Աշխարհի որոշ մասերում անդամ երկրները տարածաշրջանային կազմակերպություններին մանդատ են տվել տվյալ երկրի պետական սահմանների տարածքում համակարգել և սատարել հակաականային գործողությունների ծրագրերը: Դրա վառ օրինակն է Կենտրոնական և Հարավային Աֆրիկայում OAS ականագերծման գործողությունների կազմակերպությունը:

Այսպիսի հանգամանքներում տարածաշրջանային կազմակերպությունը հաճախ կարող է ստանձնել ԱԳԱՄ-ի պարտականությունների և դերերի մի մասը և կարող է նաև գործել որպես դոնորական ռեսուրսների “խողովակ”: Ականագերծման գործողությունների տարածաշրջանային կազմակերպության պարտականություններն ու դերերը տարբեր կլինեն երկրից երկիր և ենթակա կլինեն առանձին Փոխհամաձայնության հուշագրի կամ նմանատիպ համաձայնագրի ձևակերպմանը:

9.3. Ականագերծման գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ)

ԱԳԱՄ-ը կամ դրա անունից գործող կազմակերպությունը պատասխանատու է ապահովել պայմաններ ազգային ականագերծման գործողությունների արդյունավետ կառավարման համար: ԱԳԱՄ-ը լիակատար պատասխանատվություն է կրում իր պետական սահմանների տարածքում ականագերծման գործողությունների ծրագրի, այդ թվում նաև ԱՎԻ նախագծերի, մշակման և կառավարման համար և ապահովելու, որպեսզի դա համապատասխանի ականներից տուժած համայնքների կարիքներին ու գերակայություններին:

ԱԳԱՄ-ը պատասխանատվություն է կրում ԱՎԻ գործողությունների կառավարման համար ստեղծել և պահպանել ազգային չափորոշիչներ, կանոնակարգեր և ընթացակարգեր: Այդ ազգային չափորոշիչները, կանոնակարգերն ու գործընթացները պետք է համահունչ լինեն ՀԱԳՄՉ-ներին և ազգային ու միջազգային այլ համապատասխան չափորոշիչներին, կանոնակարգերին ու պահանջներին:

9.4. Դոնորներ

Դոնոր գործակալությունները կառավարման գործընթացի մի մասն են կազմում և որպես այդպիսին պատասխանատվություն են կրում ապահովելու, որ իրենց կողմից ֆինանսավորվող նախագծերն արդյունավետորեն են կառավարվում և համապատասխանում են միջազգային չափորոշիչներին: Սա ընդգրկում է խստապահանջ ուշադրություն պայմանագրային փաստաթղթերի ձևակերպման նկատմամբ և այն փաստի ապահովումը, որ նման պայմանագրերի իրագործման համար ընտրված ԱՎԻ կազմակերպություններն իրավասու են և հավանաբար բավարարում են հավատարմագրման ազգային չափանիշները: Դոնորները կամ նրանց գործակալները մասամբ պատասխանատու են նաև ապահովելու, որպեսզի կիրառվեն որակի կառավարման չափորոշիչներն ու ուղենիշները, ներառյալ նախագծի մոնիտորինգն ու գնահատումը: Այս պատասխանատվությունն ու պարտավորությունը նույնսիկ ավելի մեծ է լինում, երբ ԱԳԱՄ-ը գտնվում է իր կազմավորման շրջանում և դեռ չի ունեցել փորձառություն ձեռք բերելու հնարավորություն:

9.5. Ականագերծման գործողությունների կազմակերպություններ

Վերջ ի վերջո ԱՎԻ իրականացնող կազմակերպությունից է պահանջվում հիմնադրել կառավարման նպատակահարմար և արդյունավետ համակարգ, ցուցադրել դա ԱԳԱՄ-ին և կիրառել այն ԱՎԻ նախագծի ողջ ընթացքում: Եթե ԱԳԱՄ-ը գտնվում է իր կազմավորման շրջանում, ապա նման կազմակերպությունները պատասխանատվություն են կրում նաև կազմավորման գործընթացին աջակցելու համար՝ ապահովելով խորհուրդներով և աջակցությամբ, ներառյալ ազգային չափորոշիչների ձևակերպումը:

Բոլոր ԱՎԻ կազմակերպությունները պետք է կիրառեն ՀԱԳՄՉ-ները և հարմարեցնեն իրենց ԳՄԸ-ները՝ համապատասխանեցնելով դրանք ազգային օրենսդրությանն ու չափորոշիչներին:

Հավելված Ա (Նորմատիվ) Փաստաթղթեր

Հետևյալ նորմատիվ փաստաթղթերը պարունակում են դրույթներ, որոնք այս տեքստի հղումների միջոցով կազմում են չափորոշիչի այս մասի դրույթները: Ամսաթվեր պարունակող հղումների դեպքում՝ այդ հրատարակումներում հետագայում կատարված փոփոխությունները կամ վերանայումները չեն կիրառվում: Սակայն չափորոշիչի այս մասի վրա հիմնված համաձայնագրերի կողմերին խրախուսվում է հնարավորություն գտնել՝ ստորև նշված նորմատիվ փաստաթղթերի առավել թարմ տարբերակները կիրառելու համար: Ամսաթիվ չպարունակող հղումների դեպքում կիրառվում է այդ նորմատիվ փաստաթղթի ամենավերջին տարբերակը: ISO-ի և IEC-ի անդամներն ունեն վավեր ISO կամ EN գրանցամատյան.

- ա) ՀԱԳՄՉ 01.10 ՀԱԳՄՉ կիրառման ուղեցույց ուղեցույց;
- բ) ՀԱԳՄՉ 04.10 Ականազերծման գործողությունների տերմիններ, սահմանումներ և հապավումներ;
- գ) ՀԱԳՄՉ 05.10 Տեղեկությունների կառավարում;
- դ) ՀԱԳՄՉ 07.31 Ականների վտանգի իրազեկմամբ զբաղվող կազմակերպությունների և գործողությունների հավատարմագրում;
- ե) ՀԱԳՄՉ 07.41 Ականների վտանգի մասին իրազեկման ծրագրերի և նախագծերի մոնիտորինգ;
- զ) ՀԱԳՄՉ 08.10 Ականազերծման գործողությունների ընդհանուր գնահատում;
- է) ՀԱԳՄՉ 08.20 Տեխնիկական հետազոտություն;
- ը) ՀԱԳՄՉ 08.50 Ականների վտանգի իրազեկման համար տվյալների հավաքագրում և կարիքների գնահատում;
- թ) ՀԱԳՄՉ 12.10 ԱՎԻ ծրագրերի և նախագծերի պլանավորում;
- ժ) ՀԱԳՄՉ 12.20 Ականների վտանգի իրազեկման ծրագրերի և նախագծերի իրագործում;
- ի) ՀԱԳՄՉ 14.20 Ականների վտանգի իրազեկման ծրագրերի և նախագծերի գնահատում;
- լ) ՄԱԿ-ի գենդերային ուղենիշները ականազերծման գործողությունների ծրագրերի համար:

Պետք է օգտագործվի թվարկված փաստաթղթերի վերջին տարբերակը/հրատարակությունը: Այս չափորոշիչում կիրառված բոլոր փաստաթղթերի պատճենները պահպանվում են ՄԱԺՄԿ-ում (Մարդասիրական ականազերծման Ժնևի միջազգային կենտրոն): ՀԱԳՄՉ չափորոշիչների, ուղղորդիչ սկզբունքների և փաստաթղթերի վերջին տարբերակների/թողարկումների գրանցամատյանը պահպանվում է ՄԱԺՄԿ կողմից և տեղակայված է ՀԱԳՄՉ կայքէջում (տես www.mineactionstandards.org): ԱԳԱՄ-ը, գործատուները և շահագրգիռ այլ մարմիններ ու կազմակերպություններ պետք է նախքան ականազերծման ծրագրեր սկսելը ձեռք բերեն դրանց պատճենները:

Հավելված Բ (Տեղեկատվական) Տերմիններ, սահմանումներ և հասպատումներ

B.1.

Համայնքի հետ կապի ապահովում

Ականազերծման գործողություններում համայնքի հետ կապի ապահովում

Կապի ստեղծում ականներ/ՊՊՄ տարածքներ ունեցող համայնքների հետ, որի նպատակն է տեղեկություններ փոխանակել ականների/ՊՊՄ առկայության և ազդեցության վերաբերյալ, հաշվետվական կապ ստեղծել ականազերծման գործողությունների ծրագրի հետ և մշակել ռիսկի կրճատման ռազմավարություններ: Համայնքի հետ կապի նպատակն է երաշխավորել, որ ականազերծման գործողությունների ծրագիրը պլանավորելիս, իրականացնելիս և մոնիտորինգ իրականացնելիս համայնքի կարիքները և գերակայությունները առաջին տեղում լինեն:

Նշում՝ Համայնքի հետ կապը հիմնված է տեղեկությունների փոխանակման վրա և մասնակից է դարձնում համայնքներին որոշումների կայացման գործընթացին (ականազերծումից առաջ, դրա ընթացքում և հետո)՝ ականազերծման գործողությունները ըստ գերակայությունների սահմանելու համար: Արդյունքում ականազերծման գործողությունների ծրագրերը լինում են ներառական, համայնքի կարիքներին միտված և ապահովում են համայնքի բոլոր հատվածների առավելագույն մասնակցությունը: Վերջինս ներառում է նախագծերի համատեղ պլանավորումը, իրականացումը, մոնիտորինգը և գնահատումը:

Նշում՝ Համայնքի հետ կապի նպատակներից մեկը անվտանգության միջանկյալ ռազմավարության համատեղ մշակումն է՝ խրախուսելու համար անհատական և համայնքային վարքագծի փոփոխությունը: Ռազմավարության նպատակն է կրճատել անհատների և համայնքի վրա ականների/ՊՊՄ ազդեցությունը մինչև վտանգը լիովին վերացվի:

B.2.

Ականազերծում

մարդասիրական ականազերծում

գործողություններ, որոնք նպաստում են անակկերի և ՊՊՄ-ների մաքրմանը, ներառյալ տեխնիկական հետազոտումը, քարտեզագրումը, մաքրման աշխատանքները, նշագրումը, հետ-մաքրման փաստաթղթերը, ականազերծման գործողությունների մեջ համայնքի հետ կապի ապահովումը և վնասազերծված հողերի հանձնումը: Ականազերծումը կարող է տարբեր տիպի կազմակերպությունների կողմից իրականացվել, օրինակ՝ ՀԿ-ներ, կոմերցիոն ընկերություններ, ականազերծման գործողությունների ազգային թիմեր կամ զինվորական ստորաբաժանումներ: Ականազերծումը կարող է լինել արտակարգ իրավիճակային կամ զարգացման նկատառումներով:

Նշում՝ ՀԱԳՄՉ չափորոշիչներում և ուղեցույցերում ականների և ՊՊՄ-ների վնասազերծումը համարվում է ականազերծման գործընթացի ընդամենը կի մաս:

Նշում՝ ՀԱԳՄՉ չափորոշիչներում և ուղեցույցերում ականազերծումը համարվում է ականազերծման գործողությունների մի բաղադրիչ:

Նշում՝ ՀԱԳՄՉ չափորոշիչներում և ուղեցույցերում “ականազերծում” և “մարդասիրական ականազերծում” տերմինները համարժեք են:

B.3.

Գնահատում

Մի գործընթաց, որը փորձում է հնարավորինս համակարգված կերպով և օբյեկտիվորեն պարզորոշել միջամտության առավելությունը կամ արժեքը:

Նշում՝ “Օբյեկտիվորեն” բառը ցույց է տալիս հավասարակշռված վերլուծություն ստանալու կարիքը՝ ճանաչելով շահագրգիռ տարբեր կողմերի (բոլոր նրանց, ովքեր հետաքրքրված են ծրագրերով և

գտնվում են դրանց ազդեցության ներքո, ներառյալ շահառուներին որպես առաջնային շահագրգիռ կողմեր) նախապաշարմունքը և հաշտեցնելով տեսանկյունները տարբեր աղբյուրների և մեթոդների օգտագործման միջոցով:

Նշում՝ Գնահատումը դիտվում է որպես ռազմավարական գործողություն:

Նշում՝ Այս սահմանումը կիրառվում է, երբ օգտագործվում է ծրագրերի առնչությամբ (*UNICEF-ի “Կանոնակարգի և ծրագրավորման ձեռնարկ”*):

Արդյունքի կամ արդյունքների շարքի վերլուծություն՝ սահմանելու համակարգչային փաթեթի, սարքավորման կամ համակարգի քանակական և որակական արդյունավետությունն ու արժեքն այն միջավայրում, որում այն գործելու է:

Նշում՝ Այս սահմանումը կիրառվում է, երբ օգտագործվում է սարքավորումների փորձարկման և գնահատման համատեքստում:

B.4.

Պատերազմի պայթուցիկ մնացորդներ (ՊՊՄ)

Չպայթեցված զինամթերք (ՉՊԶ) և Լքված պայթուցիկ զինամթերք (ԼՊԶ): (ՄՈԶ արձանագրություն V):

B.5.

Գենդերային ուղղորդում

Որևէ պլանավորված գործողության վրա կանանց և տղամարդկանց ազդեցության գնահատում: Ականազերծման գործողությունների դեպքում գենդերային ուղղորդման ուշադրության կենտրոնում պետք է լինի, որ երկու սեռերի մտահոգություններն ու փորձը հաշվի առնվի ծրագրերի նախագծման, իրականացման, մոնիտորինգի և գնահատման ժամանակ:

B.6.

ուղեցույց

ՀԱԳՄՉ ուղեցույցն ապահովում է ընդհանուր կանոններ, սկզբունքներ, խորհրդատվություն և տեղեկություններ:

B.7.

Վնաս

Ֆիզիկական վնասվածք կամ վնաս մարդկանց առողջությանը կամ վնաս գույքին կամ միջավայրին [ISO Guide 51:1999(E)]

B.8.

Ականազերծման գործողությունների տեղեկությունների կառավարման համակարգ (IMSMA)

Նշում՝ սա ՄԱԿ-ի նախընտրած տեղեկատվական համակարգն է՝ ՄԱԿ-ի աջակցությամբ դաշտային ծրագրերում վճռական տվյալների կառավարման համար: ՀՍԿՀ-ն օգտագործողներին օգնություն է ապահովում տվյալների հավաքագրման, տվյալների պահեստավորման, հաշվետվությունների, տեղեկությունների վերլուծության և նախագծերի կառավարման գործողություններում: Դրա առաջնահերթ օգտագործողներն են ՀԱԿ-երի անձնակազմը՝ ազգային և տարածաշրջանային մակարդակներում, սակայն համակարգն օգտագործվում է նաև որպես աջակցություն բոլոր մակարդակներում **ականազերծման գործողությունների** նախագծերի իրականացնողներին և **ականազերծման կազմակերպություններին**:

B.9.

Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչներ (ՀԱԳՄՉ)

Միջազգային համայնքի անունից ՄԱԿ-ի կողմից կազմված փաստաթղթեր, որոնց նպատակն է բարձրացնել հակաականային գործողությունների անվտանգությունը և

արդյունավետությունը՝ ուղեցույց տրամադրելու, սկզբունքներ սահմանելու և որոշ դեպքերում, միջազգային պահանջներ և մասնագրեր սահմանելու միջոցով:

Նշում՝ ՀԱԳՄՉ հանդես են գալիս որպես տեղեկատու փաստաթղթերի համակարգ, և որոշ դեպքերում պահանջում են, որ ակնազերծման ծրագրերի և նախագծերի սպոնսորները և ղեկավարները ապահովեն և ցուցադրեն արդյունավետության և անվտանգության համաձայնեցված մակարդակ:

Նշում՝ ՀԱԳՄՉ ապահովում են մեկ միասնական/ընդհանուր լեզու, և առաջարկում են տվյալների հավաքման, մշակման և վարման ձևաչափը և կանոնները, որը թույլ է տալիս ազատորեն փոխանակել տեղեկությունները: Այս փոխանակումից շահում են այլ ծրագրեր և նախագծեր: Բացի այդ, տեղեկությունների փոխանակումը օգնում է կատարել ռեսուրսների հավաքագրում, գերակայությունների սահմանում և կառավարում:

B.10.

Ցամաքային ականների ազդեցության հետազոտություն (ՑԱԱՀ)

ազդեցության հետազոտություն

ականների և ՊՊՄ փաստացի կամ ենթադրյալ առկայության հետևանքով առաջացած սոցիալ-տնտեսական ազդեցության գնահատում՝ ակնազերծման ծրագրերի և նախագծերի պլանավորման ու գերակայությունների որոշման հարցում աջակցելու համար

B.11.

ական

Զինամթերք, որը նախատեսված է հողի կամ էլ որևէ այլ մակերեսի տակ, վրան կամ կողքին տեղադրելու և մարդու կամ սարքավորման անմիջական ներկայության, մոտ հեռավորության կամ շփման միջոցով պայթեցնելու համար: [MBT]

B.12.

Ականային պատահար

Ականազերծման աշխատավայրից հեռու պատահար, որն ականի կամ ՊՊՄ-ի վտանգ է ընդգրկում (տես ակնազերծման պատահար):

B.13.

Ականազերծման գործողությունների

գործողություններ, որոնք միտված են նվազեցնելու ականների և ՊՊՄ-ների սոցիալական, տնտեսական և բնապահպանական հետևանքները:

Նշում՝ հակաականային գործունեությունը չի վերաբերում միայն ականազերծմանը; այն վերաբերում է նաև մարդկանց և հասարակությանը, և ինչ ազդեցություն են կրում դրանք ականների տարածումից: Ականազերծման գործողությունների նպատակն է նվազեցնել վերգետնյա ականների ռիսկն այն մակարդակի, որպեսզի մարդիկ կարողանան անվտանգ ապրել; որպեսզի տնտեսական, սոցիալական և առողջապահության զարգացում կարողանա տեղի ունենալ՝ առանց ականների տարածման պատճառով սահմանափակումների; որպեսզի տուժածների կարիքները կարողանան բավարարվել: Հակաականային գործունեությունը բաղկացած է լրացուցիչ հինգ գործողություններից.

- a) ԱՎԲ;
- b) մարդասիրական ակնազերծում, այսինքն՝ ականների և ՊՊՄ-ների հետազոտում, քարտեզագրում, տեղանշում և մաքրում;
- c) աջակցություն տուժածներին, այդ թվում նաև առողջության վերականգնում և վերաինտեգրում;
- d) կուտակված պաշարների վնասազերծում
- e) հակահետևակային ականների կիրառման դեմ քարոզչություն

Նշում՝ մի շարք այլ ազդեցիկ գործողություններ են պահանջվում ի սատարում ականազերծման գործողությունների այս հինգ բաղադրիչներին, դրանք են՝ գնահատում և պլանավորում, ռեսուրսների մոբիլիզացիա և հերթականացում, տեղեկությունների կառավարում, մարդկային հմտությունների զարգացում և կառավարման դասընթաց, որակի կառավարում և արդյունավետ, համապատասխան և անվտանգ սարքավորումների կիրառում:

B.14.

Մոնիտորինգ

ականազերծման գործողությունների համատեքստում այս տերմինը վերաբերում է թույլատրված դիտարկում, ստուգում կամ գնահատում աշխատակետերի, հարմարությունների, սարքավորումների, գործողությունների, գործընթացների, ընթացակարգերի և թղթաբանության ոլորտներում որակավորում ունեցող անձնակազմի կողմից՝ առանց պատասխանատվություն կրելու, թե ինչն է մոնիտորինգի ենթարկվում: Մոնիտորինգը սովորաբար իրականացվում է՝ ստուգելու համաձայնեցումը պարտավորությունների, ընթացակարգերի կամ չափորոշիչ փորձի հետ և հաճախ ներառում է արձանագրման և զեկուցման բաղադրիչները:

ԱՎԻ-ի համատեքստում այս տերմինը վերաբերում է տեղի ունեցող երևույթների չափման կամ դիտարկման գործընթացին: Այն իր մեջ ներառում է.

- a) Չափման առաջընթացը ներգործության իրականացման պլանի կապակցությամբ՝ ծրագրեր/նախագծեր/գործողություններ, ռազմավարություն, քաղաքականություն և առանձնահատուկ նպատակներ:
- b) Փոփոխության չափում որևէ պայմանի կամ կայմանների խմբի դեպքում կամ դրանց բացակայության դեպքում (օրինակ՝ երեխաների կամ կանանց իրավիճակի փոփոխություն կամ էլ փոփոխություն երկրի ավելի լայն մասշտաբի համատեքստում):

Նշում՝ Սահմանումը սկիզբ է առնում UNICEF-ի “Կանոնակարգի և ծրագրավորման ձեռնարկից”:

B.15.

ԱՎԻ կազմակերպություն

Ցանկացած կազմակերպություն (պետական, հասարակական կամ քաղաքացիական հասարակության, ինչպես օրինակ կանանց միություն, երիտասարդական միություն, կարմիր խաչի և մահիկի միություններ), առևտրային հաստատություն և զինվորականներ (ներառյալ խաղաղապահ ուժերը), որոնք պատասխանատու են ԱՎԻ նախագծերի և առաջադրանքների իրականացման համար: ԱՎԻ կազմակերպությունը կարող է հիմնական կապալառու, ենթակապալառու, խորհրդատու կամ գործակալ լինել: ՏԱՎԻ ենթամիավոր՝ տերմինը վերաբերում է կազմակերպության այն ստորաբաժանմանը, անկախ անվանումից, որը հավատարմագրված է կատարելու նախատեսված մեկ կամ ավելի ԱՎԻ գործողություն, ինչպիսիք են հանրային իրազեկման նախագիծ, դպրոցական կրթական նախագծեր կամ ականազերծման գործողություններում համայնքի հետ կապի ապահովման նախագծի գնահատում:

B.16.

հանրային տեղեկությունների տարածում

Ականների կամ ՊՊՄ-ների մասին տեղեկություններ, որոնք օգտագործվում են ազգաբնակչությանն իրազեկելու կամ ունեցած տեղեկությունները թարմացնելու համար: Այն կարող է վերաբերել որոշակի հարցերի, ինչպես օրինակ ականների արգելման մասին օրենսդրության պահպանումը, կամ կարող է օգտագործվել ականազերծման գործողությունների ծրագրին հանրության կողմից ցուցաբերած օժանդակությունն ուժեղացնելու համար: Այսպիսի նախագծերը, սովորաբար, պարունակում են ռիսկի կրճատման մասին ուղերձներ, սակայն կարող են օգտագործվել նաև՝ արտացոլելու ականազերծման գործողությունների ազգային քաղաքականությունը:

B.17.

Ռիսկ

Վնասի հավանականության և դրա ուժգնության համադրությունը: [ISO ուղեցույց 51:1999(E)]

B.18.

Չպայթած զինամթերք (ՉԶ)

Պայթուցիկ զինամթերք, որը լիցքավորվել է, ձուլվել/հագեցվել պայթացիչով, զինվել կամ որևէ այլ կերպ նախապատրաստվել օգտագործման համար կամ օգտագործվել: Այն կարող է լինել հրանետված, ցած գցված, տեղադրված կամ նախատեսված, սակայն դեռևս չպայթեցված՝ ձախողման պատճառով, շահագործման կառուցվածքից ելնելով կամ էլ որևէ այլ պատճառով:

B.19.

ՄԱԿ-ի Ականազերծման ծառայություն, ՄԱԿԱԾ


ՄԱԿ-ի կազմում կարևոր մի հանգույց՝ ականների հետ կապված բոլոր գործողությունների համար:

Նշում՝ ՄԱԿԱԾ-ը ՄԱԿ-ի քարտուղարության կառուցվածքային միավորն է, որը միջազգային համայնքի առջև պատասխանատու է ՀԱԳՄՉ-երի մշակման և պահպանման համար:

Նշում՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը ԱՎԻ-ի հիմնական մարմինն է և ենթակա է ՄԱԿԱԾ-ի ընդհանուր համակարգմանը:

Հավելված Գ (Տեղեկատվական) ԱՎԻ շրջափուլ

Նշում՝ սույն Հավելվածում ԶԶ-ն պետք է հասկանալ որպես ՊՊՄ:



Փոփոխությունների գրանցում

ՀԱԳՄՉ-երի փոփոխությունների կառավարում

ՀԱԳՄՉ-ի չափորոշիչների շարքը ենթակա է պաշտոնական վերանայման երեք տարին մեկ անգամ, սակայն սա չի բացառում այդ երեք տարիների ընթացքում փոփոխությունների կատարումը՝ ելնելով գործառնական անվտանգության և արդյունավետության կամ խմբագրական նկատառումներից:

Այս ՀԱԳՄՉ-ի փոփոխությունների կատարման դեպքում դրանք համարակալվում են, և այդ փոփոխությունների կատարման ամսաթիվն ու ընդհանուր մանրամասները նշվում են ստորև բերված աղյուսակում: Փոփոխությունները նաև պետք է նշվեն ՀԱԳՄՉ-ի առաջին էջում՝ թողարկման ամսաթվի տակ ներառելով «Ներառված են փոփոխություն թիվ 1 և այլն» արտահայտությունը:

Յուրաքանչյուր ՀԱԳՄՉ-ի պաշտոնական վերանայումից հետո կարող են թողարկվել նոր խմբագրությունները: Մինչև նոր հրատարակությունը կատարված փոփոխությունները կընդգրկվեն նոր հրատարակության մեջ, և փոփոխությունների աղյուսակը կմաքրվի: Դրանից հետո կրկին կսկսվի փոփոխությունների գրանցում՝ մինչև նոր վերանայման իրականացումը:

ՀԱԳՄՉ-ի ամենավերջին փոփոխություններն այն տարբերակներն են, որոնք տեղադրվում են ՀԱԳՄՉ-ի կայքէջում՝ www.mineactionstandards.org:

Թիվ	Ամսաթիվ	Փոփոխության մանրամասներ
1	1-ը դեկտեմբերի 2004թ.	1. Ֆորմատի փոփոխություններ: 2. Տեքստի խմբագրական չնչին փոփոխություններ: 3. Փոփոխություններ տերմիններում, սահմանումներում և հապավումներում ըստ անհրաժեշտության՝ ապահովելու տվյալ ՀԱԳՄՉ-ի համապատասխանեցումը ՀԱԳՄՉ 04.10-ին: 4. Նշանակալից փոփոխություններ՝ a) Բաժին 5.1, ամբողջական վերանայում:
2	23-ը հուլիսի 2005թ.	1. ՀԱԳՄՉ-երի ողջ շարքում “Լքված ՉՉ” տերմինը մի քանի անգամ փոփոխվել է “Լքված չպայթեցված զինամթերք” տերմինով: 2. Հավելված Բ՝ “Ականների վտանգի իրազեկում” տերմինի սահմանման փոփոխում՝ համապատասխանեցնելու ՀԱԳՄՉ 04.10-ին:
3	1-ն օգոստոսի 2006թ.	1. Չնչին փոփոխություններ/լրացումներ նախաբանի առաջին և երկրորդ պարբերություններում: 2. “Սպառնալիք” տերմինի հեռացում ՀԱԳՄՉ-երի ողջ շարքից: 3. “Ականներ և ՊՊՄ-ներ ” տերմինի ավելացում: 4. Բաժին 5.1՝ երկրորդ պարբերության առաջին նախադասության հեռացում: 5. Բաժին 8.1՝ տեքստային փոփոխություններ: 6. Բաժին 8.2.1՝ նոր վերջին պարբերության ավելացում: 7. Հավելված Բ՝ “զենդերային ուղղորդում” տերմինի նոր սահմանում: